## 3.5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԸ ԵՎ ԵԼՔԵՐԸ

### 3.5.1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՒՄԲ

Հետազոտության գլխավոր համակցության նկատմամբ գնահատված արդյունքներով, հետազոտությամբ առանձնացված հասարակական կազմակերպությունների խմբի 2001թ. դրամական միջոցների մուտքերում գերակշիռ դեր ունեն անդամավճարները, նվիրատվությունները և այլ անհատույց մուտքերը, որոնց գումարը կազմել է ընդհանուր մուտքերի 72.1%-ը: Այդ անհատույց մուտքերի 65.5 %-ը ստացվել է արտասահմանից և հասարակական կազմակերպությունների ընդամենը մուտքերում կազմում է 47.2%:

Հասարակական կազմակերպությունների դրամական միջոցների ելքերում հաշվեգրված ընթացիկ ծախսերը կազմել են 4863.9 մլն. դրամ կամ ընդամենը հաշվեգրված ելքերի 68.1%-ը (փաստացի ընթացիկ ծախսերը կազմել են 4801.5 մլն. դրամ կամ ընդամենը փաստացի ելքերի 67.8%-ը), բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռք բերումը, ինչպես նաև մուծումներ կանոնադրական կապիտալում և փայատիրական մուծումները՝ 763,5 մլն. դրամ կամ ընդամենը փաստացի ելքերի 10.8%-ը, իսկ հաշվեգրված ելքերի 10.7%, նպաստները և նյութական օգնությունը (դրամական և բնեղեն արտահայտությամբ) կազմել են ընդամենը հաշվեգրված ելքերի 7.7%, իսկ փաստացի ելքերի 7.8%: Ուշագրավ է, որ հաշվեգրված ընթացիկ ծախսերում 31.2% են կազմում աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները (փաստացի վճարները համապատասխանաբար 31.3%), որոնց տեսակարար կշիռն ընդամենը ելքերում կազմում է 21.2%:

Հետազոտության գլխավոր համակցության նկատմամբ գնահատված արդյունքներով, հետազոտությամբ առանձնացված հասարակական կազմակերպությունների խմբի 2001թ. դրամական միջոցների մուտքերը, դրանց փաստացի և հաշվեգրված ելքերն, ըստ առանձին ուղղությունների, բերված են աղյուսակներ 5 և 6-ում:

Աղյուսակ 5

*Հասարակական կազմակերպությունների 2001թ. դրամական մուտքերն, ըստ առանձին ուղղությունների՝ գնահատված հետազոտության արդյունքներով*

| *Ցուցանիշի անվանումը* | *հազ. դրամ* | *տոկոսով տվյալ խմբի ընդամենի նկատմամբ* |
|---|---|---|
| Անդամավճարներ, հովանավորչական նվիրատվություններ, հումանիտար օգնություն և այլ անհատույց մուտքեր | 5 394 241 | 72.06% |
| Այդ թվում՝ բնակչությունից | 645 196 | 8.62% |
| արտասահմանից | 3 535 180 | 47.23% |
| կազմակերպություններից | 1 213 865 | 16.22% |
| Մուտքեր պետական բյուջեից և արտաբյուջետային հիմնադրամներից | 352 623 | 4.71% |
| Մուտքեր ապրանքների, արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների վաճառքից | 470 983 | 6.29% |
| Որից՝ բնակչությանը մատուցված վճարովի ծառայություններից | 109 677 | 1.47% |
| Այդ թվում՝ Մշակույթի և արվեստի ծառայություններ | 25 867 | 0.35% |
| Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ծառայություններ | 32 615 | 0.44% |
| Կրթության ծառայություններ | 26 003 | 0.35% |
| Այլ ծառայություններ | 25 192 | 0.34% |
| Հիմնական միջոցների վարձակալության դիմաց ստացած եկամուտներ (առանց ԱԱՀ) | 74 443 | 0.99% |
| Հիմնական միջոցների վաճառքից և վերագնահատումից ստացված եկամուտներ | 9 781 | 0.13% |
| Շահաբաժիններ, տոկոսներ և ֆինանսական գործունեությունից եկամուտներ | 25 456 | 0.34% |
| Այլ գործառնական և ոչ գործառնական եկամուտներ | 930 420 | 12.43% |
| Վարկեր, փոխառություններ | 130 177 | 1.74% |
| Այլ մուտքեր | 97 445 | 1.30% |
| **Ընդամենը մուտքեր** | ***7 485 569*** | ***100.00%*** |

Աղյուսակ 6

*Հասարակական կազմակերպությունների 2001թ. դրամական ելքերն (փաստացի և հաշվեգրված), ըստ առանձին ուղղությունների՝ գնահատված հետազոտության արդյունքներով*

| | փաստացի | | հաշվեգրված | |
|---|---|---|---|---|
| *Ցուցանիշի անվանումը* | *հազ. դրամ* | *տոկոսով տվյալ խմբի ընդամենի նկատմամբ* | *հազ. դրամ* | *տոկոսով տվյալ խմբի ընդամենի նկատմամբ* |
| Ընթացիկ ծախսեր, ընդամենը | 4 801 500 | 67.76% | 4 863 874 | 68.07% |
| Այդ թվում՝ Նյութական ծախսեր | 670 014 | 9.46% | 670 014 | 9.38% |
| Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումներ | 1 504 841 | 21.24% | 1 516 723 | 21.23% |
| Սոցիալական ապահովագրության և ապահովության վճարներ | 298 514 | 4.21% | 304 539 | 4.26% |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումներ | - | - | 44 310 | 0.62% |

| | փաստացի | | հաշվեգրված | |
|---|---|---|---|---|
| *Ցուցանիշի անվանումը* | *հազ. դրամ* | *տոկոսով տվյալ խմբի ընդամենի նկատմամբ* | *հազ. դրամ* | *տոկոսով տվյալ խմբի ընդամենի նկատմամբ* |
| Վարձակալության դիմաց կատարված վճարումներ | 172 205 | 2.43% | 172 205 | 2.41% |
| Վճարումներ այլ կազմակերպու-թյունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց | 920 586 | 12.99% | 920 720 | 12.89% |
| Այլ ընթացիկ ծախսեր | 1 235 340 | 17.43% | 1 235 363 | 17.29% |
| Ներդրումներ, ուղղված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռք բերմանը | 292 705 | 4.13% | 288 796 | 4.04% |
| Կապիտալ նորոգմանն ուղղված ծախսեր | 174 473 | 2.46% | 174 473 | 2.44% |
| Նպաստներ և նյութական օգնություն բնեղեն արտահայտությամբ | 26 882 | 0.38% | 26 882 | 0.38% |
| Նպաստներ և նյութական օգնություն դրամական արտահայտությամբ | 523 021 | 7.38% | 523 296 | 7.32% |
| Կորուստներ և դուրս գրումներ | 1 860 | 0.03% | 1 860 | 0.03% |
| Պարտքի հիմնական գումարի և վարկերի ու փոխառությունների տոկոսների մարում | 155 565 | 2.20% | 155 882 | 2.18% |
| Բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերում, մուծումներ կանոնադրական կապիտալում և փայատիրական մուծումներ | 763 497 | 10.77% | 763 497 | 10.69% |
| Այլ գործառնական և ոչ գործառնական ծախսեր | 346 583 | 4.89% | 346 583 | 4.85% |
| *Ընդամենը ելքեր* | *7 086 086* | *100.00%* | *7 145 143* | *100.00%* |